նենում եւրոպական տէրութեանց հետ»։ Սորանից յետոյ յօդուածագիրը դատապարտում է Ռուսաց մի քանի լրագիրների վարմունքը, որոնք այժմ մեղադրում են Անգլիային ճիշդ այն գործողութեանց համար, որ անում էր իւր ժամանակին Ռուսաստանը Բուլղարիայի վերաբերութեամբ և որոնց չանելը Անգլիայի յանցանքն էր համարում ռուս մամուլը։

«Բայց այն ժամանակուան և այժմեան հանգամանքների տարբերութիւնն ահագին է, որ ի զուր ի նկատ չեն առնում մեր հայրենասէրները։ Այն՝ ինչ որ ներելի էր Թիւրքիայի բարեկամներին եօթանասնական թուականներին, միանգամայն աններելի է մեր լրագրների համար այժմ»։ Ցոյց տալով որ անարդարացի են այն կասկածները որ ռուս լրագիրներն ունին Անգլիայի անշահասէր դիտումների մասին, այլ և մատնանիշ անելով ռուս դիւանագիտութեան անցեալում գործած սխալները, յօդուածագիրն աւելացնում է. «Անցեալի սխալներից և խրատներից յետոյ պէտք էր աւելի զգոյշ լինել մեղադրանքի և յարձակումների նկատմամբ, որ ոչ խորհուրդ ունին, ոչ նպատակ . . .

Մեր հայրենասէրները մի քանի անգամ հիմնովին փոխել են իրենց կարծիքները Թիւրքիայի մասին վերջին պատերազմից յետոյ, ենթարկուելով րոպէական տպաւորութեանց և այլևայլ արտաքին հանգամանքների. ուստի մեր լրագիրներին չի վայելիլ անգլիացոց մեղադրել անհետևողութեան և շահասիրութեան համար։ Արևելեան խնդրում Անգլիան գործում է մեզ հետ ձեռք ձեռքի տուած և հաւատում է մեզ լիովին. նա ոչինչ չէ կամենում գործել ինքը, առանց միւս տէրութեանց համաձայնութեան, և այսպիսի պայմաններում կասկածել նորա գործունէութեան շարժառիթների և դիտաւորութեանց վրայ՝ նշանակում է միայն վնասել այն միութեանը, առանց որին ոչ մի արդիւնքի չէ կարելի հասնել Կ. Պոլսում»։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

### ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Կոնդակ յանուն բժիշկ պ. Գրիգոր Մ. Նազարեանցի ի Քիշնև համարաւ 1074, որով շնորհի նմա կոչումն պատուաւոր հոգաբարձուի վասն անձնուէր ջանից և ծառայութեանց յերկսեռ դպրոցս մեր Քիշնևի ըստ վկայութեան Բարձր. կառավարչի թեմին Յուսիկ վ. Մովսիսեան։

Կոնդակ յանուն նոտար պ. Մարտիրոսի Զայցեան ի Թէոդոսիա համբ. 1076, որով օրհնի անձնուէր ջանք նորա և նուիրաբերութիւն վասն փոխելոյ ծախիւք իւրովք զհին ձև կաթուղիկէի Տաճարին Ս. Խաչ վանուց Հին Ղրիմու և վերածելոյ ի ձև կաթուղիկեայց հայաստանեայց Եկեղեցւոյ. և վասն նորոգելոյ զհին աղբիւրն նոյն վանուց. ըստ վկայութեան Գեր. Խորէն Եպիսկոպոսի Ստեփանէ։

Կոնդակ յանուն Սինօդի Ս. Էջմիածնի համբ. 1102, որով առաքեցաւ հաստատեալ նախահաշիւ Մ. Աթոռոյ որ վասն 1896 ամի։

Կոնդակ յանուն Թեմակալին Տփխեաց Գէորգ Արքեպիսկոպոսի համբ. 1127, ի պատասխանի Յայտարարութեան իւրոյ զկառավարութենէ Ներսիսեան հոգ. դպրանոցին Տփխեաց։

Կոնդակ յանուն Մեսրոպ վարդապետի Տէր Մովսիսեան միաբանի Մայր Աթոռոյս համբ. 1130, որով կարգի թեմական տեսուչ եկեղեց.—ծխակ. դպրոցաց թեմին Երևանայ։

Կոնդակ օրհնութեան յանուն բարեպաշտ ամուսնոց պ. Հայրապետի և Տիկին Դշխուհի Խաչատրեանց ի Նոր Բայազիտ, համբ. 1151, վասն նուիրաբերութեանց իւրեանց ս. անօթոց և սպասից ս. Կարապետ եկեղեցւոյ քաղաքին Նոր Բայազիտոյ։

—

### ԾԱՆՈՒՑՈՒՄՆ ՈՒՍՈՒՄՆ. ՎԱՐԶ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ.

Մինչև դեկտեմբերի վերջը ուսուցչաց ընդհանուր ցուցակի մէջ մտցուած են.

կարգ.

1. Թեկղի Եփրեմեան Իսահակեանց . . . ԺԳ.
2. Նունէ Գաբրիէլեան Սունդուկեանց . . Ժ.
3. Տիկին Աննա Սողոմոնեան Տէր Յակոբեանց Ժ.

Իբրև ռուսերէնի քերականութեան ձեռնարկ եկեղեցական—ծխական ուսումնարաններում գործածելու համար ընդունուած է հետևեալ դասագիրքը.

А Преображенскій. Начальная русская грамматика, съ приложеніемъ письменныхъ и устныхъ упражненій. Для городскихъ и сельскихъ народныхъ училищъ. Изд. кн. магазина В. Думнова. Москва. Цѣна 20 коп.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ.
1. Տարուայ վերջին, Ն. Վ. . . . . 455
2. Կուսակցութիւնները Լ. Մոնո Թարգմ . 457
3. Մեծն Աթանաս Թարգմ. Ց. Վ. . 459
4. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ . . . . 462
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.
5. Հին Հայ Երգիչներ . . 465
6. Քրօրինեաց երգերը Խ. ✠ Դ. . . . 469
7. Սասանեան Տէրութեան պատմութիւն Թ. Նէօլտէքէի . Թարգմ. Ն. Ք. . 471
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ.
8. Գանակոծութիւնը եւ ուրիշ մարմնական պատիժներ Դպրոցական կարգապահութեան մէջ. Խ. Տ Կ 475
9. Տղայ Դաւթի եւ. . . . Խ. Վ. : 484
10. ՄԱՆՐԱԼՈՒՐՔ . . . . . . 487
ԱԶԴԱՑԻՐ.
ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ . . 488
ՄԱՅՐ ԱԹՈՌ. . . . . . . .
Հեռագիրներ . . . . . .
1. ՌՈՒՍԱՀԱՅՔ . . . . . . . .
Երևանի թեմ. . . . . . .
ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ